



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

---

ՀՀ, Երևան, 0025, Արովյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup>  
• 52<sup>а</sup> Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.yasu.am

№ 8 «16» հունիսի, 2020 թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8**

**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՆՈՐՀՐԴԻ՝  
2020 թ. ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

**Օրակարգում՝**

1. 2020-21 ուստարվա ծանրաբեռնվածություններ կազմելու ընթացքն ամբիոններում:
2. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվություն:
3. Ամբիոնների վարիչների ընտրություն:
4. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
5. Ընթացիկ հարցեր:

Բացելով նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն ասաց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 37 անդամներից առցանց նիստին մասնակցում է 32-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**Առաջին հարցի՝** 2020-21 ուստարվա ծանրաբեռնվածություններ կազմելու ընթացքն ամբիոններում, առիթով նախ ելույթ ունեցավ պրոֆ. Ա. Ավագյանը՝ հայտնելով իր խոր

մտահոգությունը ժամաքանակների ու հաստիքների աննախադեպ կրճատումների պատճառով: Այնուհետև էլույթ ունեցող բոլոր ամբիոնների վարիչները (պրոֆեսորներ Ս. Մուրադյան, Յու. Ավետիսյան, Ա. Աբաջյան, դոցենտներ Ս. Գրիգորյան, Ա. Ջրբաշյան և Վ. Պետրոսյան) ևս նկատեցին, որ ծանրաբեռնվածությունների իմաստով իրենք կանգնած են խիստ դժվարությունների առջև, բայց և այնպես սպասում են օգոստոսի վերջերին ռեկտորատի կողմից հրահանգներին:

**Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի առիթով՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ բանասիրության ֆակուլտետի գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աշխեն Էդուարդի Ջրբաշյանի** մասնակցելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Վ. Գաբրիելյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանն իր հաղորդման մեջ նշեց, որ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու հավակնորդը մեկն է՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշխեն Էդուարդի Ջրբաշյանը: Նա, ըստ ընդունված կարգի, ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, և մրցութային հանձնաժողովը նրան միաձայն երաշխավորել է քվեարկվելու ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Մասնավորապես նկատվեց, որ դոց. Ա. Ջրբաշյանը Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հեղինակավոր ու առաջատար դասախոսներից է, հանրապետության ճանաչված գրականագետներից մեկը: Նա հեղինակ է գիտական բազմաթիվ հրապարակումների. ընդ որում՝ վերջին 5 տարվա ընթացքում տպագրել է գիտական 9 հոդված, ուսումնամեթոդական 2 ձեռնարկ, որոնցից մեկը՝ համահեղինակությամբ: Վերջին 5 տարվա՝ նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4.7 միավոր: Մայր բուհի 100-ամյակի առթիվ նա պարգևատրվել է ԵՊՀ Ոսկե մեդալով:

Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Հայրապետյան Աշոտ - նախագահ
2. Եղիազարյան Վարդան
3. Հովակիմյան Հովհաննես

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո ձայներ հաշվող հանձնաժողովի նախագահ

Ա. Հայրապետյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 37 անդամներից նիստին ներկա են եղել 32-ը, և քվեարկությանը մասնակցել են 32-ը:

Բաժանվել է 32 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 31 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝ **կողմ – 30, դեմ – 1, անվավեր – չկա:**

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.** - 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աշխեն Էդուարդի Ջրբաշյանին** ընտրված համարել գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրա հետ կնքելու աշխատանքային պայմանագիր:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աննա Հենրիկի Աբաջյանի** մասնակցելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, Վ. Գաբրիելյանը, Ս. Մուրադյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանն իր հաղորդման մեջ նշեց, որ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու հավակնորդը մեկն է՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աննա Հենրիկի Աբաջյանը:** Նա, ըստ ընդունված կարգի, ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, և մրցութային հանձնաժողովը նրան միաձայն երաշխավորել է քվեարկվելու ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Մասնավորապես նկատվեց, որ պրոֆ. Ա. Աբաջյանը Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հեղինակավոր ու առաջատար դասախոսներից է: Նա հեղինակ է գիտական բազմաթիվ հրապարակումների. ընդ որում՝ վերջին 5 տարվա ընթացքում տպագրել է գիտական 12 հոդված, համահեղինակ է բուհական 1 և ուսումնամեթոդական 1 ձեռնարկի: Վերջին 5 տարվա՝ նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4.1 միավոր: Մայր բուհի 100-ամյակի առթիվ նա պարգևատրվել է ԵՊՀ Ոսկե մեդալով:

Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

4. Հայրապետյան Աշոտ - նախագահ
5. Եղիազարյան Վարդան
6. Հովակիմյան Հովհաննես

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո ձայներ հաշվող հանձնաժողովի նախագահ Ա. Հայրապետյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 37 անդամներից նիստին ներկա են եղել 32-ը, և քվեարկությանը մասնակցել են 32-ը:

Բաժանվել է 32 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 30 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝ **կողմ – 29, դեմ – 0, անվավեր – 1:**

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.** - 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աննա Հենրիկի Աբաջյանին** ընտրված համարել հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրա հետ կնքելու աշխատանքային պայմանագիր:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սեյրան Զավենի Գրիգորյանի** մասնակցելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Վ. Գաբրիելյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանն իր հաղորդման մեջ նշեց, որ հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցութին մասնակցելու հավակնորդը մեկն է՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սեյրան Զավենի Գրիգորյանը: Նա, ըստ ընդունված կարգի, ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, և մրցութային հանձնաժողովը նրան միաձայն երաշխավորել է քվեարկվելու ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Մասնավորապես նկատվեց, որ դոց. Ս. Գրիգորյանը Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հեղինակավոր ու առաջատար դասախոսներից է: Նա հեղինակ է գիտական բազմաթիվ հրապարակումների. ընդ որում՝ վերջին 5 տարվա ընթացքում տպագրել է գիտական 5 հոդված և 1 մենագրություն: Վերջին 5 տարվա՝ նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4.9 միավոր: Մայր բուհի 100-ամյակի առթիվ նա պարգևատրվել է ԵՊՀ Ոսկե մեդալով:

Ամբիոնն ու մրցութային հանձնաժողովը նրա թեկնածությունը պաշտպանել են միաձայն:

Փակ-գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց ձայներ հաշվող հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

7. Հայրապետյան Աշոտ - նախագահ
8. Եղիազարյան Վարդան
9. Հովակիմյան Հովհաննես

Փակ-գաղտնի քվեարկությունից հետո ձայներ հաշվող հանձնաժողովի նախագահ Ա. Հայրապետյանը հրապարակեց արդյունքները.

Խորհրդի 37 անդամներից նիստին ներկա են եղել 32-ը, և քվեարկությանը մասնակցել են 32-ը:

Բաժանվել է 32 քվեաթերթիկ:

Քվեատուփում հայտնվել է 31 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝ **կողմ – 30, դեմ – 1, անվավեր – չկա:**

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.** - 1. Հաշվի առնելով փակ-գաղտնի քվեարկության արդյունքները՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սեյրան Զավենի Գրիգորյանին** ընտրված համարել հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Միջնորդել համալսարանի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի որոշումը և գործող կարգի համաձայն՝ նրա հետ կնքելու աշխատանքային պայմանագիր:

Գիտական խորհուրդն այնուհետև անցավ օրակարգի **չորրորդ**՝ առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման **հարցին**:

**ԼՍԵՑԻՆ.**- Հայ նորագույն գրականության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ **Առլինա Սարգսյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Առլինա Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Արդի հայ պատմավեպի պոետիկան»:

2019 թ. նոյեմբերի 13-15-ը մասնակցել է Վանաձորում կայացած միջազգային գիտաժողովին՝ նվիրված Պողոս Խաչատրյանի 90-ամյակին, հանդես է եկել «Պապ թագավորի կերպարը նեոմիֆոլոգիզմի լույսի ներքո» թեմայով զեկուցմամբ, որը տպագրվել է ՎՊՀ-ի կողմից հրատարակված գիտական հոդվածների ժողովածուում:

2020 թ. ապրիլին հրավիրված է եղել Կահիրեի համալսարան՝ «Միֆական ենթաշերտերը Հայկ Խաչատրյանի «Հայոց առաջին արքան» պատմավեպում» թեմայով զեկուցմամբ հանդես գալու “Armenian and Oriental Folklore – A Bridge Connecting Cultures” խորագրով միջազգային գիտաժողովին, որը հետաձգվել է համաճարակի պատճառով:

Մասնակցել է պարտադիր և կամրնտրական մի շարք դասընթացների, հանձնել ստուգարքները, ուսումնասիրել է անհրաժեշտ ողջ գրականությունը:

Պատրաստվում է տպագրելու ևս երկու հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** – **Առլինա Սարգսյանին** ատեստավորել:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի՝ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ նոր գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Աստղիկ Վալերիանի Սողոյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Աստղիկ Սողոյանը 2018թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայ դասական գրականություն» մասնագիտության գծով (Ժ.01.01): Նրա ատենախոսության թեման է «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը», ղեկավար՝ ր. գ. դ., պրոֆ. Ալբերտ Մակարյան:

Աստղիկ Սողոյանը 2019 - 2020 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը՝ աշխատելով Անանիա Շիրակացու անվան միջազգային հարաբերությունների համալսարանում: Շարադրել է ատենախոսության 2-րդ գլուխը՝ «Գեղարվեստականի և ոչ գեղարվեստականի սահմանագծին», և 3-րդ գլխի մի մասը:

Նա հաջողությամբ հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները:

Տպագրվել են ասպիրանտի գիտական 5 հոդվածները («Խաչատուր Աբովյանի «Հագարփեշեն» երգիծապոեմը», «Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» քնարապատմողական պոեմի երկխոսային բնույթը», «Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» պոեմի պատումի աշխարհը», «Խաչատուր Աբովյանը մանկագիր. պատումի առանձնահատկությունները «Պատմություն Տիգրանի» վեպում» և «Նախաշաւիղ կրթութեան...» դասագիրքը՝ որպէս մանկական ստեղծագործությունների ընթերցարան»): Տպագրության հանձնված 6-րդ հոդվածը («Հերոսի ճանապարհի մոնոմիֆի մոդելը Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում») տպագրման փուլում է:

«Խաչատուր Աբովյանը՝ առաջին հայ բանահավաք» թեմայով զեկուցումով Աստղիկ Սողոյանը ապրիլին պետք է հանդես գար Կահիրեի համալսարանում կայանալիք հայագիտական գիտաժողովին, որը, սակայն, համավարակի պատճառով հետաձգվել է:

Հունիսին ասպիրանտը պատրաստվում է հանձնել «Հայ դասական գրականություն» որակավորման քննությունը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ նոր գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ **Աստղիկ Սողոյանին** ատեստավորել:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության ամբիոնի՝ 2019-20 ուստարում ընդունված առկա ուսուցման ասպիրանտ **Մարիանա Բոցինյանի** ատեստավորման հարցը:

Մ. Բոցինյանի ատենախոսության թեման է՝ «Չալդրի և շրջակա բնակավայրերի հայերեն խոսվածքները», գիտական ղեկավար՝ ր. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյան:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը և առկա ասպիրանտ Մարիանա Բոցինյանը:

Ասպիրանտը նշեց, որ 2019–2020 ուստարում հանձնել է մեկ պարտադիր և մեկ կամընտրական դասընթացի քննություն: Աշխատանքի առաջին գլուխը գրեթե ավարտին է հասցրել: Մեկ հոդված՝ «Տեղաշարժեր Չալդերի և շրջակա բնակավայրերի հայերեն խոսվածքներում» թեմայով, տպագրման փուլում է:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Հաշվի առնելով **Մարիանա Բոցինյանի** կատարած աշխատանքը մեկ տարվա ընթացքում՝ ատեստավորել նրան:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Լիանա Վարդանի Ազիզյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը և դոց. Ա. Հայրապետյանը:

Թեմա՝ «Հին հայերենի և լատիներենի հնչույթաբանական համակարգերը (գուգադրական քննություն)». դեկավար՝ ք. գ. թ., դոց. Վ. Պետրոսյան:

Նշվեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Լիանա Ազիզյանը 2019-2020թթ. ուստարվա ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքները.

1) մասնակցել է անհրաժեշտ պարտադիր և ընտրովի դասընթացներին և հանձնել այդ առարկաներից քննություններ և ստուգարքներ: Պարտադիր դասընթացներից քննություններ և ստուգարքներ է հանձնել հետևյալ առարկաներից.

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն
2. Մասնագիտական օտար լեզու
3. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ:

Ընտրովի դասընթացները ներառում են՝

1. Գիտության փիլիսոփայություն
2. Հոգեբանություն
3. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում
4. Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում:

2) Սկսել է աշխատանքը ատենախոսության վրա: Մասնավորապես, կազմվել է ատենախոսության նախնական պլան և գրականության ցանկ: Ուսումնասիրել է տեսական գրականություն հնչույթաբանության վերաբերյալ և շարադրել է որոշ մաս աշխատանքի 1-ին՝ «Չայնավորական համակարգերը» գլխից:



**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Հիմք ընդունելով **Լիանա Ազիզյանի** կատարած աշխատանքը մեկ տարվա ընթացքում՝ ատեստավորել նրան:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Միրանուշ Էդուարդի Կեսոյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Միրանուշ Կեսոյանը 2018 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Ներակայումը արդի հայերենում», ղեկավար՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Յուրի Ավետիսյան:

Միրանուշ Կեսոյանը 2019 - 2020 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը (Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց և թիվ 195 ավագ դպրոց): Շարադրել է ատենախոսության 2-րդ գլուխը՝ «Ներակայումը քերականական մակարդակում», և 3-րդ ու 4-րդ գլուխների մի մասը:

Հրատարակման ներկայացված երկու հոդվածները («Ներակայումը արդի հայերենի բառային մակարդակում» և «Ներակայումը արդի հայերենի շարահյուսական մակարդակում») տպագրման փուլում են: Պատրաստ է նաև 3-րդ հոդվածը՝ «Ներակայումը արդի հայերենի ձևաբանական մակարդակում»:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Միրանուշ Կեսոյանին** ատեստավորել:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Անուշ Անդրանիկի Խաչատրյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Անուշ Խաչատրյանը 2018 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Էլեկտրոնային մամուլի լեզուն (բառապաշար և քերականական իրողություններ)», ղեկավար՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Ռուբեն Սաքապետոյան:

Անուշ Խաչատրյանը 2019 - 2020 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը (Երևանի թիվ 105 և թիվ 118 ավագ դպրոցներ): Շարունակել է ատենախոսության համար անհրաժեշտ տեսական գրականության ուսումնասիրությունը, գիտական նյութերի հավաքման, օրինակների համալրման աշխատանքները: Ատենախոսությունն ամբողջացման փուլում է: Տպագրության է

հանձնել երկու հոդված՝ «Իմաստային և դիպվածային նորաբանությունները հայաստանյան էլեկտրոնային մամուլում» (2018-2019 թթ.), «Ժարգոնը էլեկտրոնային մամուլի էջերում»: Շարադրում է ատենախոսության երկու գլուխները և հաջորդ հոդվածները:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Անուշ Խաչատրյանին** ատեստավորել:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Նոանե Մանվելի Սարգսյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Լ. Թելյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Նոանե Սարգսյանը 2019 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Գրաբար - միջին հայերեն - արևմտահայերեն փոխանցումները բայական համակարգում» (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան:

Նոանե Սարգսյանը 2019 - 2020 ուստարում մասնակցել է պարտադիր (3) և ոչ պարտադիր (3) դասընթացներին, հանձնել է ստուգարքներ հետևյալ առարկաներից՝ «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մասնագիտական օտար լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Գիտության փիլիսոփայություն», «Մանկավարժություն», «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում»: Նա ուսումնասիրել է ատենախոսությանն առնչվող գիտական գրականությունը, շարադրել է սահմանական եղանակին վերաբերող տեսական հատվածը: Տպագրության է պատրաստել մեկ հոդված:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Նոանե Սարգսյանին** ատեստավորել:

**Ընթացիկ հարցերում՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի նախաձեռնությամբ 2019 թ. ղեկտեմբերին Երվանդ Օտյանի և Լևոն Շանթի 150-ամյակներին նվիրված գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը և դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ հայ գրականության պատմության ամբիոնի նախաձեռնությամբ 2019 թ. ղեկտեմբերին կազմակերպվեց մեծ գրողներ Ե. Օտյանի և Լ. Շանթի ծննդյան 150-ամյակ-

ներին նվիրված գիտական նստաշրջան, որն անցավ պատշաճ մակարդակով: Նստաշրջանին զեկուցումներով հանդես եկան ԵՊՀ-ից պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, դոց Ա. Բեքմեզյանը, ՀՀ ԳԱ ակադեմիայից՝ Բ. Գ. Թ. Ն. Սարգսյանը, ՀՀ գրողների միությունից՝ Բ. Գ. Դ. Պ. Դեմիրճյանը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ից՝ պրոֆ. Ս. Դանիելյանը: Նստաշրջանում նրանք կարդացել են զեկուցումների համառոտ տարբերակները, ապա նրանց ժամանակ ու հնարավորություն է տրվել համալրելու և ամբողջացնելու իրենց նյութերը մեկ առանձին ժողովածուով տպագրելու համար: Այդ ժողովածուն այժմ պատրաստ է տպագրության և ունի երկու գրախոսություն: Գրքի խմբագիրն է պրոֆ. Ս. Մուրադյանը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի նախաձեռնությամբ 2019 թ. դեկտեմբերին Երվանդ Օտյանի և Լևոն Շանթի 150-ամյակներին նվիրված գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն երաշխավորել տպագրության:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի ամբիոնի վարիչ, Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ գիտության վաստակավոր գործիչ **Սամվել Մուրադյանի** «Հայ նոր գրականության պատմություն» բուհական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը և դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ պրոֆ. Ս. Մուրադյանը տարիների տքնաջան աշխատանքով գրել և ավարտելով հրատարակման է ներկայացրել «Հայ նոր գրականության պատմություն» բուհական ձեռնարկի Ա հատորը, որն ընդգրկում է նախաաբովյանական շրջանից մինչև Պ. Դուրյան: Բ և Գ հատորները, որ պետք է ընդգրկեն 1870—1890-ական և 1900-ական թթ. առաջին երկու տասնամյակները, պատրաստման ընթացքի մեջ են, և այդ գործընթացին մասնակցում են ամբիոնի մյուս աշխատակիցները նույնպես:

Ընթերցվեցին Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հայ նոր ու նորագույն գրականության ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ և «Միյուոք» գիտակրթական կենտրոնի տնօրեն, Բ. Գ. Դ., պրոֆ. Սուրեն Դանիելյանի դրական կարծիքը, ապա տեղի ունեցավ մտքերի փոխանակություն:

Կարևոր համարվեց, որ հեղինակը գրական նյութը ներկայացրել է մեր ժողովրդի պատմական զարգացմանը զուգահեռ, արդիականության դիրքերից թոթափելով գրականագիտական հնացած ըմբռումներն ու կաղապարները, իրենց դարն ապրած եզրաբառ

- տերմինները, նոր վերլուծությամբ բնորոշելով գրականության զարգացման շրջափուլերը և արժևորելով Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Պեշիկթաշյանի, Ս. Շահագիզի, Պ. Դուրյանի ստեղծած գեղարվեստական մնայուն արժեքները, գիտահանրամատչելի պարզաբանել նրանց գրական հայացքներն ու դավանած գեղարվեստական ուղղությունը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - Նկատի ունենալով դասագրքի կարևորությունը՝ այն երաշխավորել տպագրության:

**ԼՍԵՑԻՆ** - «Արդի հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ» գիտաժողովի հողվածների ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:


**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ն. Դիլբարյանը, Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, 2019 թ. դեկտեմբերին 18-ին ԳՊԿ թեմատիկ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում հետազոտական աշխատանք կատարող խմբի՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում անցկացրած գիտաժողովը («Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ» խորագրով) նպատակ ուներ ի մի բերելու մասնագիտական շրջաններում հարցի վերաբերյալ եղած ակադեմիական արդիական մոտեցումները: Եվ այս ժողովածուն, որն ամփոփում է գիտաժողովում ներկայացված զեկուցումները, կարող է մի կարևոր հանգրվան լինել արդի գրական հայերենի բառային կազմի մշակման և զարգացման հիմնախնդիրները պարզելու և դրանք այս կամ այն չափով լուծելու համար: Նշվեց, որ ժողովածուն ունի գիտական պատշաճ մակարդակ և արժանի է տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով հնչած կարծիքները՝ («Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ» գիտական հողվածների ժողովածուն երաշխավորել տպագրության:

**ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**



**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**